


Հարցաթերթ
 Աշխարհագրություն առարկայի օլիմպիադայի
 մարզային փուլի – 2025-2026 ուս. տարի
 /տևողությունը – 120 րոպե/
 10 – րդ դասարան

- 1. Պնդումներից յուրաքանչյուրի համար նշել՝ ճիշտ է, թե՛ սխալ** 2միավոր
- ա. ՀՀ աշխատանքային ռեսուրսներում կանայք գերազանցում են տղամարդկանց
 բ. ՀՀ աշխատուժում կանայք գերազանցում են տղամարդկանց
 գ. ՀՀ զբաղված բնակչության կառուցվածքում կանայք գերազանցում են տղամարդկանց
 դ. ՀՀ գործազուրկների կառուցվածքում կանայք գերազանցում են տղամարդկանց
 ե. ՀՀ սահմանամերձ բնակավայրերից թվով ամենաշատը Տավուշի մարզում են
 գ. ՀՀ սահմանամերձ քաղաքների թվով առաջատարը Սյունիքն է
 է. Կոտայքից հետո ամենաքիչ թվով սահմանամերձ բնակավայրեր ունի Արագածոտնը
 ը. ՀՀ միակ մարզը, որտեղ բոլոր սահմանակից բնակավայրերը սահմանակից են միաժամանակ երկու երկրի՝ Շիրակն է
- 2. Նկարագրով որոշել պետությունը** 1միավոր
- Բնակչությամբ գերխոշոր այդ երկիրը կաթոլիկների բացարձակ թվով առաջինն է իր մայրցամաքում: Այն նաև ամենամեծ բնակչության թիվն ունի ֆրանկոֆոն երկրների կազմում: Արտահանման կառուցվածքում մոտ 80%-ը գունավոր մետաղներն են:
- 3. Նշված եզրույթներից որը՞ չի վերաբերում բացասական ջերմաստիճանների պայմաններում ռելիեֆագոյացման գործընթացներին կամ դրանց հետևանքներին** 1միավոր
- ա. սոլիֆլուկցիա բ. տրոգ գ. կառ դ. բաթոլիտ
- 4. Ելնելով եզիպտացորենի բերքի տվյալների տրամագրից՝ պատասխանեք հարցերին**



- ա. Ի՞նչ եզրույթով կարելի է բնորոշել որոշակի ժամանակահատվածում երկրներից յուրաքանչյուրում տեղ գտած բերքի թռիչքային աճի պատճառների ամբողջությունը (1միավոր)
- բ. Ի՞նչ երկու գործոններով է պայմանավորված այդ երևույթի լայն կիրառումը եզիպտացորենի պարագայում (1միավոր)

գ. Նշված ժամանակահատվածում ո՞ր երկրի տնտեսությունն է եղել ամենաանկայունը (0.5միավոր)

դ. Ներկայիս միտումների պահպանման դեպքում նշվածներից ո՞ր երկիրն է առաջիկայում դառնալու առաջատար (0.5միավոր)

5. Խնդիրներ

ա. Հավասարամեծ պրոյեկցիայով քարտեզի մասշտաբն է 1:20000000: Որքա՞ն է 10մլն կմ² մակերեսով տարածքի մեծությունը այդ քարտեզում: 1միավոր

բ. Գտեք Լոնդոնի տեղական ժամանակը, եթե արևելյան երկայնության 41⁰ միջօրեականում գտնվող վայրի գոտիական ժամանակը նույն պահին 16:16 է: 1միավոր

6. Թվարկել լանջային չորս պրոցեսներ, որոնք բնորոշ են ՀՀ տարածքին 1միավոր

7. Դասավորել

ա. Նշված ծովերն ըստ սառցածածկի տևողության աճող հաջորդականության. Ռոսսի, Նորվեգական, Բարենցի, Կարայի 1միավոր


բ. երկրներն ըստ վերջին տարիներին Հայաստան այցելած զբոսաշրջիկների քաղաքացիության աճող հաջորդականությամբ. Ֆրանսիա, ՌԴ, Իրան, Հնդկաստան 1միավոր

8. Բացատրել

ա. Ինչու՞ են կլիմայի գլոբալ փոփոխության արդյունքում լեռնային էկոհամակարգերն ավելի խոցելի, քան հարթավայրերում համանման էկոհամակարգերը 1միավոր

բ. Ինչու՞ է Սևանա լճից հյուսիս-արևմուտք գոտում ձևավորվել ՀՀ տարածքում ամենանոսր ջրագրական ցանցը 1 միավոր

9. Դիտարկեք փոթորկային ջրագիրը և պատասխանեք հարցերին



Փոթորկային ջրագիրը տրամագիր է, որը ցույց է տալիս թափվող տեղումների և գետի ծախսի փոփոխությունների միջև առնչությունները որոշակի ժամանակահատվածում:

ա. Երկու ավազանում էլ թափվել է հավասար՝ 50մմ տեղում: Ա գետի ջրհավաք ավազանի մակերեսը 1500կմ² է, իսկ երկրորդինը՝ 3000կմ²: Որքա՞ն ծավալի ջուր է մուտք գործել ավազաններից յուրաքանչյուրը 1միավոր

բ. Ինչո՞վ է պայմանավորված փոթորկային ջրագրի նման տարբերությունը Ա և Բ գետերի միջև: Ներկայացնել երկու հիմնավոր պատճառ՝ տեղայնացնելով Ա և Բ գետերի ավազանների օրինակով 1միավոր


10. Բացատրել հասկացությունը և պատասխանել հարակից հարցերին

- ա.** Ի՞նչ են բնեռային ցերեկներն ու ինչո՞վ են տարբերվում սպիտակ գիշերներից (0.5միավոր):
- բ.** Ո՞ր լայնությունների միջակայքում է հնարավոր դիտարկել բնեռային ցերեկը (0.5միավոր):
- գ.** Հյուսիսային կիսագնդում ո՞ր ամսաթվերի միջակայքում է դիտվում բնեռային ցերեկը (0.5միավոր):
- դ.** Ո՞ր կիսագնդում է բնեռային ցերեկվա գումարային տևողությունն ավելի երկար (0.5միավոր)

11. Համապատասխանեցնել բնական աղետի անունը տեսակի ու ամենաշատ տուժած երկրի հետ (օր.՝ Տոհոկու-երկրաշարժ-4) 2 միավոր

Անուն – Տոհոկու, Նարգիզ, Միչուան, Նյու

Տեսակ – Լճաբանական աղետ, երկրաշարժ, երկրաշարժ/ցունամի, ցիկլոն



Առարկայական հանձնաժողովի նախագահ՝ Վ.Ասատրյան